ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2021թ. N-- -Ա

ՈՐՈՇՈՒՄ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված

Տպագրված է ընդամենը 4 օրինակ
Բաղկացած է 8 էջից,
կազմված է «---» ----------2021 թ.
Օրինակ ---------

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«……» ……. 2021թ.
N----- -Ա
ՈՐՈՇՄԱՄԲ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

…… Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

Գրանցման ամսաթիվը՝ 26.12.1994 թ.
Գրանցման թիվ՝ 286.140.00676
Վկայական՝ 03Ա063676
ՀՎՀՀ՝ 02500241
30.03.2010 թ.-ին հաստատված
կանոնադրության
Թիվ …….. փոփոխությունը գրանցված է
Իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից

« ……. » …….. 2021թ.

աշխատակից՝ …….

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ /ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2021

1. «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության (ՓԲԸ) կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Կանոնադրության 2-րդ գլուխը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

ա) «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված քաղաքաշինական ծրագրային (կամ տարածական պլանավորման) հետևյալ փաստաթղթերի մշակումը.

• Հայաստանի Հանրապետության տարաբնակեցման և տարածքային կազմակերպման գլխավոր նախագծերը,

• Հայաստանի Հանրապետության մարզերի, ինչպես նաև մեկից ավելի համայնքների տարածքներ ընդգրկող տարածքային հատակագծման նախագծերը,

• Երևան քաղաքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերը,

• Երևան քաղաքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական զոտիավորման նախագծերը,

• Երևան քաղաքի և այլ բնակավայրերի պատմամշակութային հիմնավորումների, պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գոտիների, բնության հատուկ պահպանվող տարածքների նախագծերը.

• լանդշաֆտային, առողջարանային, ռեկրեացիոն, գործառական այլ համակարգերի տարածքային կազմակերպման, ինչպես նաև արտադրական կարողությունների, ինժեներական, տրանսպորտային, կոմունալ և սոցիալական ենթակառուցվածքների տեղաբաշխման նախագծերը՝ Երևանի, հանրապետության և առանձին վարչատարածքային միավորների կամ դրանց խմբերի համար:

բ) «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 14-րդ մասով նախատեսված Ճարտարապետաշինարարական նախագծային հետևյալ փաստաթղթերի մշակումը.

• կառուցապատման նախագծերը, ինչպես նաև քաղաքաշինական գործունեություն իրականացնելու նպատակով գործառական տարածքների հատակագծման և բարեկարգման նախագծերը.

• բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների կառուցման, դրանց վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման նախագծերը, ինչպես նաև ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների և դրանց մասերի նախագծերը:

գ) քաղաքաշինական նորմերի, նախահաշվային նորմատիվների ու գնացուցակների մշակում,

դ) հետախուզական, գեոդեզիական, տոպոգրաֆիկական և ինժեներա-երկրաբանական աշխատանքների իրականացում՝ քաղաքաշինական օբյեկտների նախագծման համար,

ե) հեղինակային հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

զ) տեխնիկական հսկողության իրականացում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

է) քաղաքաշինական գործունեության իրականացման նպատակով հողամասերի հատակագծերի կազմում, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև կառուցապատողի հետ համատեղ օբյեկտների ճարտարապետական-հատակագծային առաջադրանքների նախապատրաստում,

ը) հողօգտագործման, ինժեներական ենթակառուցվածքների և հաղորդակցուղիների հերթապահ հատակագծերի կազմում և վարում,

թ) քաղաքաշինական օբյեկտների տեխնիկական հսկողության կազմակերպում,

ժ) քաղաքաշինական ոլորտին վերաբերվող ներդրումային, գործարարական և այլ ծրագրերի կազմում,

ժա) նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն,

ժբ)շինարարական-ներդրումային ծրագրերի մշակման նպատակով մարքեթինգային հետազոտությունների կազմակերպում,

ժգ) քաղաքաշինության, ճարտարապետության և շինարարության բնագավառների գիտական, գիտահետազոտական աշխատանքների և ուսումնասիրությունների կատարում:

2.2. Ընկերությունը հիմնադրին մատուցում է գնման առարկա հանդիսացող Ընկերության սույն կանոնադրության 2.1 կետում շարադրված աշխատանքները և ծառայությունները:

2.3. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի և արտոնագրի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ դրանք ստանալու պահից կամ դրանցում նշված ժամկետներում:

Սույն փոփոխությունը հանդիսանում է 30.03.2010թ. պետական ռեգիստրում գրանցված «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության անբաժանելի մասը:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

««Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության փոփոխությունը պայմանավորված է կանոնադրության 2.1 կետով նախատեսված քաղաքաշինական փաստաթղթերի անվանումները «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ և 14-րդ մասերի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ